Հ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ԱՌԿԱ ՈՒՍՈՒՑՄԱՄԲ ՄԱԳԻՍՏՐՈՍԻ ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐՈՎ 2019/2020 ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՏԱՐՎԱ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է պետության կողմից ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ /անվճար/ (**առաջին փուլ)** և բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ /վճարովի/ (**երկրորդ փուլ)** առկա ուսուցմամբ մագիստրոսի կրթական ծրագրով 2019/2020 ուսումնական տարվա ընդունելություն հետևյալ մասնագիտությունների և մասնագիտացումների գծով.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը[1]	Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (**անվճար)**		Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (**վճարովի**)	Տարեկան ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)
	Ընդամենը	այդ թվում՝ ԲՀ		
031101.00.7 - **Տնտեսագիտություն**, **այդ թվում՝**	22	1	78	
031101.02.7 - Տնտեսագիտության տեսություն				520.000
031101.03.7 - Ձեռնարկությունների տնտեսագիտություն 031101.13.7 - Ձեռնարկատիրական գործունեություն				520.000
031101.04.7 - Միջազգային տնտեսական հարաբերություններ				570.000
031101.06.7 - Բնօգտագործման տնտեսագիտություն				520.000
031101.07.7 - Աշխատանքի տնտեսագիտություն				520.000
031101.08.7 – Մաթեմ. մեթոդներ և մոդելները տնտ. մեջ				520.000
031101.15.7 - Տնտեսության պետական կարգավորում 031101.16.7 - Մակրոտնտեսական վերլուծություն				520.000

[1]ՀՊՏՀ առկա մագիստրատուրայում ուսման տևողությունը 2 տարի է (4 կիսամյակ)՝ 120 կրեդիտ բեռնվածությամբ, բացառությամբ «Գործարար վարչարարություն /կառավարում/» և «Հանրային կառավարում/» մասնագիտացումների, որոնց համար ուսման տևողությունը 1.5 տարի է (3 կիսամյակ)՝ 90 կրեդիտ բեռնվածությամբ:

041101.00.7 - **Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)**	16	1	34	
041101.01.7 - Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/				620.000
041101.03.7 - Աուդիտ				620.000
041201.00.7 **– Ֆինանսներ (ըստ ոլորտի), այդ թվում՝**	24	1	76	
041201.03.7 - Հանրային ֆինանսներ 041201.04.7 - Կորպորատիվ ֆինանսներ				620.000
041201.02.7 - Ապահովագրական գործ				620.000
041201.05.7 - Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում				620.000
041201.06.7 - Բանկային գործունեության կազմակերպում				620.000
041201.08.7 - Մաքսային վարչարարություն				620.000
041301.00.7 **– Կառավարում (ըստ ոլորտի), այդ թվում՝**	19	1	91	
*041301.04.7 - **Գործարար վարչարարություն /կառավարում/*** *041301. 17.7 - **Հանրային կառավարում***				680.000
041301.13.7 - Նախագծերի կառավարում				620.000
041301.03.7 - Պետական և մունիցիպալ կառավարում				620.000
041301. 10.7 - Հակաճգնաժամային կառավարում				620.000
041301.11.7 - Զբոսաշրջության կառավարում				620.000
041301.15.7 - Կառավարման տեղեկատվական համակարգեր				520.000
041301. 16.7 - Պետական գույքի կառավարում 041301.20.7 - Հողագույքային հարաբերություններ				520.000
041401.00.7 - **Շուկայագիտություն /մարքեթինգ/(ըստ ոլորտի), այդ թվում՝**	12	1	53	
041401.03.7 - Մարքեթինգային հետազոտություններ 041401.04.7 - Մարքեթինգային հաղորդակցություններ				570.000
041401.02.7 - Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձ.				520.000

041401.05.7 - Կոմերցիա				520.000
041401.06.7 - Բիզնեսի կազմակերպում				520.000
056201.00.7 - **Վիճակագրություն**, **այդ թվում՝**	2		8	
056201.01.7 - Վիճակագրություն				520.000
ԸՆԴԱՄԵՆԸ	95	5	340	

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը (ՀՊՏՀ), Ճարտարապետության և շինարարության Հայաստանի ազգային համալսարանը (ՃՇՀԱՀ) և Վալենսիայի պոլիտեխնիկական համալսարանը (ՎՊՀ, Իսպանիա) իրականացնում են «Նախագծերի կառավարում» (զբոսաշրջության, մշակութային ժառանգության կառավարման և երկրատեղեկատվական համակարգերի ոլորտներում) մագիստրոսական համատեղ կրթական ծրագիրը՝ մեկտեղելով տնտեսագիտական և կառավարման իմացությունը տեխնիկական գիտելիքի ու հմտությունների հետ: Ուսումնառության առաջին տարում ուսանողները կսովորեն ՀՊՏՀ-ում և ՃՇՀԱՀ-ում՝ իրենց կարգավիճակով (անվճար կամ վճարովի), իսկ երկրորդ տարում՝ ՎՊՀ-ում (վճարովի)՝ Բոլոնիայի համալսարանի (Իտալիա) Ռիմինիի մասնաճյուղում փորձառություն անցնելու հնարավորությամբ:

Մագիստրոսական համատեղ կրթական ծրագրի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել ՀՊՏՀ և հայաստանյան այլ բուհերի առնվազն բակալավրի որակավորում ունեցող շրջանավարտները: Ընդունելությունը կատարվում է հարցազրույցով, որի ժամանակ ստուգվում է նաև անգլերենի իմացությունը: Ուսման վարձը ՀՀ-ում ուսումնառության ընթացքում կազմում է տարեկան 620.000 դրամ: Անվճար մրցույթին կարող են մասնակցել 2018-2019 ուսումնական տարվա այն շրջանավարտները, որոնց միջին որակական գնահատականը համապատասխանում է ՀՊՏՀ մագիստրատուրա անվճար ընդունելությանը: Մագիստրոսական կրթական ծրագրի ընդունելության մրցույթին կարող են մասնակցել նաև օտարերկրյա քաղաքացիները:

ՎՊՀ-ում ուսումը շարունակելու համար դիմորդները պետք է տիրապետեն անգլերենին, քանի որ բոլոր դասընթացները կազմակերպվելու են բառացապես անգլերենով: ՎՊՀ կողմից շնորհվող որակավորում (դիպլոմ) ստանալու համար ուսանողները կրթական ծրագրով նախատեսված կրեդիտների (120 ԿՓԿՀ) առնվազն 40% (48 ԿՓԿՀ) պետք է կուտակեն և մագիստրոսական թեզը պաշտպանեն ՎՊՀ-ում: Ուսման վարձը Իսպանիայում ուսումնառության ընթացքում կազմում է տարեկան 3000 եվրո:

ՀՀ-ում և Իսպանիայում ուսումնառության հաջող ավարտի դեպքում մագիստրոսական համատեղ կրթական ծրագրի ուսանողները կստանան երկու որակավորում՝ ՀՊՏՀ և ՃՇՀԱՀ համատեղ դիպլոմ և ՎՊՀ դիպլոմ:

Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանը հայտարարում է ընդունելություն՝ «**Կորպորատիվ ֆինանսներ**» **մագիստրոսական ծրագրի** շրջանակներում: Եվրամիության կողմից համաֆինանսավորվող **ՐԻՖԱՅՆ ծրագրի շրջանակներում**

իրականացվել է «**Կորպորատիվ ֆինանսներ**» **մագիստրոսական ծրագրի բարեփոխում**: Մասնավորապես, փոխվել են ծրագրի կառուցվածքը, հստակեցվել և աշխատաշուկայի պահանջներին են համապատասխանեցվել վերջնարդյունքները, ութ առարկաների գծով Եվրոպական գործընկերների հետ համատեղ մշակվել է դասավանդման մեթոդաբանությունը և նորացվել են դասավանդման նյութերը: Ծրագրի շրջանակներում դասավանդող ութ դասախոսներ երկշաբաթյա վերապատրաստում են անցել եվրոպական գործընկեր համալսարաններում:

Մագիստրոսական ծրագրի ավարտին ուսանողները կունենան հետևյալ գիտելիքները, հմտություններն ու կարողությունները.

- ֆինանսների տեսություններն ընկալելու, վերլուծելու և կիրառելու ունակություն,
- ֆինանսական խնդիրները հետազոտության ընթացքում բացահայտելու և տարբեր ֆինանսական իրավիճակներ վերլուծելու ունակություն,
- հարկային վարչարարության իմացություն, հարկերը հաշվարկելու և վերլուծելու ունակություն,
- ֆինանսական ինստիտուտների (կորպորացիաների) կառավարման սկզբունքների, մեթոդների և գործիքների իմացություն,
- կորպորացիաների բյուջեն, հոսքերը, ծախսերը և եկամուտները վերլուծելու ունակություն,
- կորպորացիաների ֆինանսական կայունության և իրացվելիության գնահատման և վերլուծության ունակություն,
- ռիսկերի կառավարման և մաթեմատիկական ֆինանսների իմացություն,
- գրավոր և բանավոր հաղորդակցություն, թիմային աշխատանք,
- հետազոտական մեթոդաբանության, գործիքակազմի և եզրահանգումներ անելու ունակություն,
- խնդիրներ ձևակերպելու և դրանք լուծելու ուղիների մշակման ունակություն,
- գիտելիքը գործնականում կիրառելու ունակություն,
- արտասահմանյան գիտական, մասնագիտական գրականությունից օգտվելու ունակություն

Կրթական ծրագրի իրականացման համար ս.թ. սեպտեմբերին գնվելու է անգլալեզու գրականություն, որոնք կիրառվելու են դասավանդման գործընթացում: Կրթական ծրագրի ընթացքում առարկաներից մի քանիսը դասավանդվելու են անգլերենով: Հարցազրույցների օրն ու ժամը կհայտարարվի նախապես:

ՀՊՏՀ ԳՅՈՒՄՐՈՒ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)		Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի)	Տարեկան ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)
	Ընդամենը	այդ թվում՝ ԲՀ		
031101.00.7 - **Տնտեսագիտություն**, **այդ թվում՝**	2	-	18	
031101.04.7 - Միջազգային տնտեսական հարաբերություններ	2	-	18	450.000
041101.00.7 - **Հաշվապահական հաշվառում և հարկում (ըստ ոլորտի)**, **այդ թվում՝**	1	-	24	
041101.01.7 - Հաշվապահական հաշվառում /ըստ ճյուղերի/	1	-	24	450.000
041201.00.7 **– Ֆինանսներ (ըստ ոլորտի)**, **այդ թվում՝**	3	1	17	
041201.06.7 - Բանկային գործունեության կազմակերպում	3	1	17	450.000
041301.00.7 **– Կառավարում (ըստ ոլորտի)**, **այդ թվում՝**	2		18	
041301.04.7 - Գործարար վարչարարություն /կառավարում/				450.000
*041301.04.7 - **Գործարար վարչարարություն /կառավարում*/***				500.000
*041301. 17.7 - **Հանրային կառավարում******				500.000
ԸՆԴԱՄԵՆԸ	8	1	77	

* ***«Գործարար վարչարարություն /կառավարում/ » և «Հանրային կառավարում/ » մասնագիտացումների համար ուսման տևողությունը սահմանվել է 1.5 տարի է (3 կիսամյակ)՝ 90 կրեդիտ բեռնվածությամբ: Դասապրոցեսները կազմակերպվելու են 18 :00 –ից հետո:***

ՀՊՏՀ ԵՂԵԳՆԱՁՈՐԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ

Մասնագիտությունը, մասնագիտության կրթական ծրագիրը	Պետության կողմից ուսանողական նպաստի ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցմամբ (անվճար)		Բուհի կողմից ուսման վարձի մասնակի զեղչի կիրառմամբ (վճարովի)	Տարեկան ուսման վարձի չափը (ՀՀ դրամ)
	Ընդամենը	այդ թվում՝ ԲՁ		
041201.00.7 - **Ֆինանսներ (ըստ ոլորտի), այդ թվում՝**	-	-	15	
041201.03.7 - Հանրային ֆինանսներ	-	-	15	370.000
041301.00.7 - **Կառավարում (ըստ ոլորտի), այդ թվում՝**	-	-	15	
041301.04.7 - Գործարար վարչարարություն (կառավարում)	-	-	15	370.000
ԸՆԴԱՄԵՆԸ	-	-	30	

ՀՊՏՀ առկա ուսուցմամբ մագիստրատուրա մրցութային կարգով կարող են ընդունվել ՀՀ պետական և ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բարձրագույն ուսումնական հաստատությունների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող անձինք: Մագիստրոսի աստիճան ունեցող քաղաքացիները երկրորդ մագիստրոսական կրթություն կարող են ստանալ միայն վճարովի հիմունքներով:

Օտարերկրյա բուհերի շրջանավարտների ընդունելությունը կատարվում է մասնագիտական քննական հանձնաժողովի անցկացրած հարցազրույցի արդյունքների, ուսումնական և արտաքին կապերի բաժինների կարծիքի հիման վրա՝ ընդունող հանձնաժողովի որոշմամբ:

Առկա մագիստրատուրայի ընդունելությունը կատարվում է **երկու փուլով**.

Ա. Ընդունելության **առաջին փուլին** կարող են մասնակցել միայն ՀՊՏՀ առկա բակալավրիատի 2018/2019 ուսումնական տարվա համապատասխան մասնագիտության շրջանավարտները, որոնց դիպլոմի հավելվածում գրանցված ուսումնառության բոլոր կիսամյակների արդյունքում կուտակված միջին որակական գնահատականը (ՄՈԳ) կազմում է առնվազն 86:

Թափուր տեղերի առկայության դեպքում մրցույթին կարող են մասնակցել նաև **տվյալ մասնագիտությամբ այլ բուհեր ավարտած դիմորդները**:

Ընդունելությունը կատարվում է մրցութային հիմունքներով՝ ըստ դիմորդների ՄՈԳ-երի (հարյուրերորդականի ճշտությամբ):

Դիմորդների հավասար ՄՈԳ-ի պարագայում առաջնահերթության կարգով հաշվի են առնվում հետևյալ լրացուցիչ չափանիշները՝

- գերազանցության դիպլոմի առկայությունը.
- ավարտական աշխատանքի պաշտպանությունից ստացած միավորը.
- մասնագիտական և մասնագիտացման առարկաներից ստացած միավորների գումարը:

Բանակից զորացրված (ԲԶ) դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում տվյալ կրթական ծրագրով առկա անվճար ուսուցման մագիստրատուրայի ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել **ՀՊՏՀ բակալավրի համապատասխան մասնագիտություն ունեցող, պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները**: Ընդունելությունը կատարվում է առանց շեմային քննության, մրցութային կարգով՝ նախորդ ուսումնառության դիպլոմի հավելվածում գրանցված ՄՈԳ-ի հիման վրա: Բանակից զորացրված դիմորդների համար նախատեսված տեղերի շրջանակներում ընդունելության մրցույթին մասնակցելու համար կարող են դիմել մինչև սույն թվականի **օգոստոսի** 26-**ը ներառյալ**:

Առաջին փուլի դիմորդների փաստաթղթերն ընդունվում են ս/թ **հունիսի** 3-**ից** 12-**ը ներառյալ**:

Բ. **Երկրորդ փուլում** առկա ուսուցման մագիստրատուրայի վճարովի համակարգ կարող են դիմել ՀՊՏՀ (նաև առաջին փուլի պահանջները չբավարարելու դեպքում) և այլ պետական ու ըստ մասնագիտությունների հավատարմագրված ոչ պետական բուհերի առկա և հեռակա ուսուցման ընթացիկ և նախորդ տարիների բակալավրի, դիպլոմավորված մասնագետի կամ մագիստրոսի որակավորում ունեցող շրջանավարտները:

Սահմանված տեղերի շրջանակներում, **առանց մասնագիտական շեմային քննության**, ընդունելության մրցույթին կարող են մասնակցել **համապատասխան մասնագիտության ՀՊՏՀ և այլ բուհի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները**:

Անվճար ուսուցման համակարգի մրցույթից դուրս մնացած պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և վերջին երեք տարվա ընթացքում զորացրված դիմորդները կարող են մասնակցել վճարովի համակարգի ընդունելությանը՝ մրցույթային կարգով: Պարտադիր ժամկետային զինվորական ծառայություն անցած և ավելի քան երեք տարի առաջ զորացրված դիմորդների ընդունելությունը կատարվում է միայն վճարովի համակարգում՝ մրցութային կարգով:

Երկրորդ փուլով մագիստրատուրա ընդունվելու համար ՀՊՏՀ կամ այլ բուհերի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող դիմորդները հանձնում են շեմային քննություն համապատասխան մասնագիտության բակալավրիական ծրագրի հարցաշարերով (հարցաշարերը՝ asue.am կայքում):

Ըստ ՄՈԳ-երի ընդունելության մրցույթին սահմանված տեղերի շրջանակներում մասնակցում են համապատասխան մասնագիտության ՀՊՏՀ և այլ բուհերի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտները, ՀՊՏՀ կամ այլ բուհերի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չհանդիսացող այն դիմորդները, ովքեր դրական գնահատական են ստացել շեմային քննությունից:

Երկրորդ փուլի համար փաստաթղթերն ընդունվում են **ս/թ հունիսի** 3-**ից հուլիսի** 5-**ը** ներառյալ, շեմային քննությունները կկազմակերպվեն **ս/թ հուլիսի** 8-**ին ժամը 10:00-ին**:

Առկա ուսուցմամբ վճարովի մագիստրատուրա ընդունված դիմորդների վերջնական հրամանագրումը կատարվում է առաջին կիսամյակի ուսման վարձի վճարման թույլտվություն ստանալուց հետո մեկ ամսվա ընթացքում կիսամյակի ուսման վարձը վճարելու և վճարման կտրոնը մինչև օգոստոսի 20-ն ընդունող հանձնաժողով ներկայացնելու դեպքում:

Դիմորդները ներկայացվում են հետևյալ փաստաթղթերը.

1. մագիստրատուրայի ընդունելության դիմում-հայտ (լրացվում է տեղում),
2. բարձրագույն կրթության դիպլոմի և դրա հավելվածի բնագրերն ու պատճենները կամ ակադեմիական տեղեկանքը (տվյալ տարվա այն շրջանավարտների դեպքում, ովքեր դեռ չեն ստացել ավարտական փաստաթուղթը),
3. անձնագրի բնօրինակը և պատճենը,
4. 3 x 4 սմ չափսի չորս լուսանկար,
5. զինվորական գրքույկի (առկայության դեպքում) կամ կցագրման վկայականի բնօրինակը և պատճենը,
6. վերջին 3 տարվա ընթացքում ժամկետային զինվորական ծառայությունից զորացրված դիմորդները, ովքեր տվյալ մասնագիտության գծով մասնակցում են բանակից զորացրվածների (ԲԶ) համար հատկացված տեղերի մրցույթին, ներկայացնում են նաև տեղեկանք զինկոմիսարիատից՝ ծառայությունից զորացրվելու վերաբերյալ,
7. դիմորդի առանձնահատուկ կարգավիճակը (արտոնությունը) հավաստող փաստաթղթի բնօրինակն ու պատճենը:
8. ՀՀ օրենսդրությամբ սահմանված արտոնություններից օգտվող դիմորդները ներկայացնում են համապատասխան փաստաթղթեր (1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամության, ՀՀ պաշտպանության ժամանակ զոհված (մահացած) զինծառայողի երեխա լինելու, ժամկետային զինվորական ծառայության պարտականությունները կատարելիս հաշմանդամ դառնալու, առանց ծնողական խնամքի մնացած՝ մինչև 23 տարեկան երեխա լինելու մասին):

Դիմում-հայտում դիմորդը կարող է հայտագրել 2 (երկու) մագիստրոսական կրթական ծրագիր՝ ըստ նախապատվության: Հայտում նշված առաջին ծրագրի չբացվելու կամ մրցույթից դուրս մնալու դեպքում դիմորդը մասնակցում է երկրորդ ծրագրի մրցույթին: Ծրագիրը չի բացվում, եթե ուսանողների թիվը չի համապատասխանում ՀՊՏՀ գիտական խորհրդի 2016 թվականի հունիսի 22-ի N 9 նիստով սահմանված պահանջին: Եթե դիմորդի հայտագրած ծրագրերից ոչ մեկը չի բացվում, ապա ընդունող հանձնաժողովը նրան առաջարկում է որևէ այլ կրթական ծրագիր, որտեղ առկա են թափուր տեղեր՝ տվյալ կրթական ծրագրի մուտքային պահանջները բավարարելու կամ շեմային քննությունը հանձնելու պայմանով:

Ըստ կրթական ծրագրերի ընդունելության շեմային քննությանը դիմորդը մասնակցում է, եթե ՀՊՏՀ համապատասխան մասնագիտության կամ այլ բուհի նույն մասնագիտության բակալավրիատի շրջանավարտ չէ: Դիմորդն իր հայտագրած կրթական ծրագրի (ծրագրերի) համար շեմային քննություն է հանձնում հետևյալ առարկաներից.

1) «Գործարար վարչարարություն (կառավարում)», «Պետական և մունիցիպալ կառավարում» «Նախագծերի կառավարում», և «Հանրային կառավարում» մասնագիտացումների համար՝ «**Մենեջմենթ**».

2) «Աշխատանքի տնտեսագիտություն» մասնագիտացման համար՝ «**Աշխատանքի տնտեսագիտություն**».

3) «Ձեռնարկությունների տնտեսագիտություն» և «Ձեռնարկատիրական գործունեություն» մասնագիտացումների համար՝ «**Ձեռնարկությունների տնտեսագիտություն և կառավարում**».

4) «Միջազգային տնտեսական հարաբերություններ» մասնագիտացման համար՝ «**Միջազգային տնտեսական հարաբերություններ**».

5) «Հողագույքային հարաբերություններ» մասնագիտացման համար՝ «**Հողագույքային հարաբերություններ**».

6) «Պետական գույքի կառավարում» մասնագիտացման համար՝ «**Պետական գույքի կառավարում**».

7) «Մակրոտնտեսական վերլուծություն», «Տնտեսության պետական կարգավորում» մասնագիտացումների համար՝ «**Մակրոտնտեսական կարգավորում**».

8) «Մարքեթինգային հետազոտություններ» և «Մարքեթինգային հաղորդակցություններ» մասնագիտացումների համար՝ «**Մարքեթինգ**».

9) «Հանրային ֆինանսներ» և «Կորպորատիվ ֆինանսներ» մասնագիտացումների համար՝ «**Ֆինանսներ**».

10) «Հաշվապահական հաշվառում» մասնագիտության համար՝ «**Հաշվապահական հաշվառում**».

11) «Աուդիտ» մասնագիտացման համար՝ «**Աուդիտ**».

12) «Վիճակագրություն» մասնագիտացման համար՝ «**Վիճակագրություն**».

13) «Կառավարման տեղեկատվական համակարգեր» մասնագիտացման համար՝ «**Կառավարման տեղեկատվական համակարգեր**».

14) «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտացման համար՝ «**Տնտեսագիտության տեսություն**».

15) «Բնօգտագործման տնտեսագիտություն» մասնագիտացման համար՝ «**Բնօգտագործման տնտեսագիտություն**».

16) «Մաթեմատիկական մեթոդներ և մոդելները տնտեսագիտության մեջ» մասնագիտացման համար՝ «**Տնտեսական գործընթացների մոդելավորում**».

17) «Ապահովագրական գործ» մասնագիտացման համար՝ «**Ապահովագրական գործ**».

18) «Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում» մասնագիտացման համար՝ «**Արժեթղթերի շուկայի վերլուծություն և կառավարում**».

19) «Բանկային գործունեության կազմակերպում» մասնագիտացման համար՝ «**Բանկային գործ**».

20) «Մաքսային վարչարարություն» մասնագիտացման համար՝ «**Մաքսային գործ**».

21) «Հակաճգնաժամային կառավարում» մասնագիտացման համար՝ «**Հակաճգնաժամային կառավարում**».

22) «Զբոսաշրջության կառավարում» մասնագիտացման համար՝ «**Զբոսաշրջության մենեջմենթ**».

23) «Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն» մասնագիտացման համար՝ «**Ապրանքագիտություն և ապրանքի որակի փորձաքննություն**».

24) «Կոմերցիա» մասնագիտացման համար՝ «**Կոմերցիա**».

25) «Բիզնեսի կազմակերպում» մասնագիտացման համար՝ «**Բիզնեսի տնտեսագիտություն և պլանավորում**»:

Դիմորդների փաստաթղթերը ընդունվում են ՀՊՏՀ-ում՝ Երևան, Նալբանդյան 128 հասցեով, իսկ Գյումրիում և Եղեգնաձորում՝ մասնաճյուղերի ընդունող հանձնաժողովներում:

Մանրամասն տեղեկությունների համար այցելել www.asue.am պաշտոնական կայք կամ զանգահարել (010) 593-473 հեռախոսահամարով: